

5.

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ  
ԵՐԿՐԱԲԱՆԱՊԱՂՊԱՆՈՒԹՅՈՒՆ  
GEOGRAPHY, GEOLOGY AND GEOECOLOGY  
ГЕОГРАФИЯ, ГЕОЛОГИЯ И ГЕОЭКОЛОГИЯ

**ԴԵԲԵԴ ԳԵՏԻ ՋՐԴԱՎԱՔ ԱՎԱԶԱՆԻ ՏԱՐԱՆՋԱՏՈՒՄՆ ԸՍՏ ՌԻՍԿԱՅԻՆ  
ՋՐԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ**

**Բ. Պ. ՄԱՑԱԿԱՆՅԱՆ**

*Աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,  
ԳՊՀ աշխարհագրության ամբիոնի վարիչ*

**Բ. Գ. ԶԱՔԱՐՅԱՆ**

*Աշխարհագրական գիտությունների թեկնածու*

**Է. Է. ՄԻՍԱԿՅԱՆ**

*Չայպետիդոտմետ, Ջրային հիմնահարցերի և  
հիդրոտեխնիկայի հայցորդ*

**Լ. Օ. ԱՂԱԶԱՆՅԱՆ**

*Ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի  
ինստիտուտի հայցորդ*

Ներկայումս, գրեթե ամենուրեք, զնալով աճում են ջրային ռեսուրսների հետ կապված հիմնահարցերը (քանակի, որակի, անկայունության, ջրային աղետների)՝ կապված մարդածին բեռնվածության ավելացման և բնության՝ մասնավորապես կլիմայական պայմանների գլոբալ փոփոխության հետ:

Ժամանակակից ջրային հիմնահարցերն առաջ են բերում խնամքով կառավարման և պլանավորման անհրաժեշտություն: Պլանավորման և կառավարման խնդիրների լուծման համար անհրաժեշտ է տարանջատել ջրային ռեսուրսներն այնպես, որ յուրաքանչյուրի համար հնարավոր լինի կիրառել առավել արդյունավետ՝ իր հատկություններին համապատասխանող պլանավորում և կիրառում:

Գետավազանի ջրային ռեսուրսները գետերի ամբողջ երկայնքով չեն կարող ունենալ միևնույն բնական և մարդածին պայմանները: Այդ պատճառով էլ անհրաժեշտ է գետավազանը բաժանել առանձին մասերի կամ ջրային մարմինների այնպես, որ դրանցից յուրաքանչյուրն իր ամբողջ երկայնքով ունենա

համանման բնական և մարդածին պայմաններ: Գետավազանի բաժանումը առանձին մասերի, կամ ջրային մարմինների, մեր կողմից կատարվել է համաձայն Եվրոմիության ջրի շրջանակային դիրեկտիվի՝ ԵՄ, «Ջրային շրջանակային դիրեկտիվ», (2000/60/EC) [3]:

Ջրային մարմինների տարանջատման առաջին քայլը տարանջատման չափանիշների ընտրությունն է: ԵՄ-ի կողմից առաջարկվում է բնութագրման ցուցանիշների հետևյալ խմբերը. ֆիզիկական և կենսաբանական, սոցիալ-տնտեսական, ջրօգտագործման, ջրային հաշվեկշռի, ջրի և ջրօգտագործման վրա ազդեցություն գործող բնապահպանական գործոնների: Ստորև թվարկվում են այն գործոնները, որոնց առկայությունն առաջացնում է ջրային ռեսուրսների քանակական և որակական փոփոխություններ և այդ պատճառով կարող է հանդիսանալ տարանջատման չափանիշներ.

- տարածքի բարձրությունը ծովի մակարդակից, ինչը որոշում է ջրի էկոլոգիայի փոփոխությունը (տաք և սառը ջրեր),
- գետավազանի ռելիեֆը (հարթավայրային, լեռնային, հովտային),
- գետային հոսքերի հիմնական միախառնման հանգույցները,
- խոշոր բնակավայրեր, արդյունաբերական ձեռնարկություններ, ինտենսիվ գյուղատնտեսական գոտիներ,
- հիդրոմորֆոլոգիա, որը ներառում է գետի բնական հունի փոփոխության աստիճանը: Միևնույն ժամանակ, մակերևութային ջրային մարմինը չպետք է բաժանվի մակերևութային ջրերի տարբեր որակի կարգ ունեցող տարածքների: Մակերևութային ջրային մարմինը չպետք է հատի մակերևութային ջրային մարմինների տիպերի միջև եղած սահմանը: Այն պետք է լինի որևէ մի տիպի, քանի որ մակերևութային ջրային մարմինների նպատակներից մեկն է դիֆերենցել դրանք՝ ըստ առանձին տիպերի:

Հայտնի է, որ աշխարհագրական կամ հիդրոմորֆոլոգիական բնութագրերը կարող են էականորեն ազդել մակերևութային ջրերի էկոհամակարգերի և մարդկային գործունեության արդյունքում դրանց խոցելիության վրա: Այդ բնութագրերը կարող են նաև դիֆերենցել մակերևութային դիսկրետ տարրերը: Օրինակ, գետի մի մասի միախառնումը մեկ այլ մասի կարող է հստակորեն նշել որպես ջրային մարմնի աշխարհագրական և հիդրոմորֆոլոգիական առումով հստակ սահման: Հետևաբար ջրային մարմինների սահմանները ուրվագծելու համար պետք է օգտագործվի համանման որոշակի տարածք:

Հաջորդ քայլում հաշվի են առնվում աշխարհագրական և հիդրոմորֆոլոգիական տարրերը: Այդուհանդերձ, եթե նման մոտեցումը չի հանգեցնում ջրա-

յին մարմինների իմաստալից տարանջատման, կարելի է օգտագործել այլ չափանիշներ:

Այնուհետև, պետք է հաշվի առնել ջրերի որակի վիճակը և պահպանվող տարածքների ասպեկտները: Ջրերի վիճակի վերաբերյալ բավարար տեղեկատվության բացակայության պարագայում ճնշումների և ազդեցությունների վերլուծության արդյունքները կարող են օգտագործվել ջրային մարմինների իմաստալից սահմանները բացահայտելու ժամանակ:

Քանի որ մարդկային գործունեության ազդեցությունները ջրհավաք ավազաններում միշտ տարբեր են, ուստի մակերևութային ջրային մարմնի սահմանները տարանջատելիս անհրաժեշտ է օգտագործել մակերևութային ջրային մարմնի վիճակի վրա ազդող հիմնական փոփոխությունները, որպեսզի տրվի մակերևութային ջրային մարմնի վիճակի ճշգրիտ նկարագրությունը:

Ջրային շրջանակային դիրեկտիվով սահմանվող ջրային մարմինները բացահայտելիս կարող են հաշվի առնվել նաև պահպանվող տարածքների առկա սահմանները: Անհրաժեշտ է նշել, որ ջրային մարմինների սահմանները շատ դեպքերում չեն համընկնում աշխարհագրական տարածքներին և տարբեր չափանիշների հիման վրա սահմանվող տարածքներին: Այն դեպքում, երբ ջրային մարմինը մասամբ է ընկնում պահպանվող տարածքի ներսում կամ դրանից դուրս, կարելի է հաշվի առնել տվյալ ջրային մարմինը երկու մասի բաժանելու հարցը, որպեսզի սահմանները համընկնեն: Անհրաժեշտ է բալանսավորել ջրային մարմնի պատշաճ նկարագրման պահանջը և մակերևութային ջրերը անկառավարելի թվով մակերևութային ջրային մարմինների բաժանելուց խուսափելու անհրաժեշտությունը:

Ռիսկային ջրային մարմինները մեր կողմից որոշվել են հաշվի առնելով էական մարդածին ճնշումները: Ջրային մարմինը սահմանվում է որպես ռիսկային՝ բնապահպանական որակի նպատակների ծախսողման տեսանկյունից, հիմնվելով ՁՇԴ հողված 5-ով սահմանվող բնութագրման ու ՁՇԴ հողված 8-ով սահմանվող մոնիտորինգի արդյունքների վրա:

Խիստ փոփոխված կամ արհեստական ջրային մարմինները պետք է բացահայտվեն և որոշվեն այն վայրերում, որտեղ չի հաստատվել լավ էկոլոգիական վիճակ, ինչը պայմանավորված է ֆիզիկական փոփոխությունների հետևանքով մակերևութային ջրերի հիդրոմորֆոլոգիական բնութագրերով:

Սկզբունքորեն, դրանց սահմանները հիմնականում տարանջատվում են ըստ հիդրոմորֆոլոգիական բնութագրերի տարածվածության, որոնք հանդիսանում են մարդկային գործունեության հետևանքով ֆիզիկական փոփոխութ-

յունների արդյունք և խոչընդոտում են լավ էկոլոգիական վիճակի հասնելուն: Նման ջրային մարմիններն առանձնացվում են որպես խիստ փոփոխված, եթե լավ էկոլոգիական վիճակի հասնելու համար այդ մարմնի հիդրոմորֆոլոգիական բնութագրիչների փոփոխություններն էական հակադարձ ազդեցություն կունենան հանրային լայն հետաքրքրություն ներկայացնող ջրօգտագործման վրա, օրինակ՝ խմելու ջրամատակարարման, էլեկտրաէներգիայի արտադրության կամ ոռոգման նպատակներով, ջրի կարգավորման վրա և այլն:

Հաշվի առնելով վերը նշված տարանջատման չափանիշները, մեր կողմից ՀՀ տարածքում Կուրի ամենախոշոր գետի՝ Դեբեդի գետավազանը տարանջատվել է 48 ջրային մարմինների, որոնցից 1-ը խիստ փոփոխված ջրային մարմին է, 4-ը՝ արհեստական, 32-ը՝ աշխարհագրական կամ հիդրոմորֆոլոգիական բնութագրերով տարանջատված, իսկ 11-ը՝ ռիսկային ջրային մարմիններ:

1. Որպես խիստ փոփոխված ջրային մարմին ավազանում առանձնացվել է Մեծավանի ջրամբարը: Այս ջրային մարմնի մակերեսը կազմում է 15.8 կմ<sup>2</sup>: Ջրամբարը գտնվում է Մեծավան գյուղից 4.5 կմ հյուսիս արևելք, Տաշիր գետի վերին անաճուն ձախ վտակի վրա: Որպես արհեստական ջրային մարմնի տարածք իր մեջ ներառվել է նաև ՀՀ տարածքում ջրամբարի ջրհավաք ավազանի մակերեսը: Ջրամբարի ծավալը կազմում է 5.4 մլն. մ<sup>3</sup>, իսկ հայելու մակերեսը՝ 300 հա: Ջրամբարը օգտագործվում է ոռոգման նպատակներով՝ ոռոգելով 678 հա տարածք:

Ըստ աշխարհագրական կամ հիդրոմորֆոլոգիական բնութագրերի՝ տարանջատված ջրային մարմինները հետևյալն են.

2. Տաշիր գետի վերին հոսանքները մինչև Տաշիր բնակավայրի սկիզբը, 3. Տաշիր քաղաքը, 4. Սարատովկա բնակավայրը մինչև Լոռու ջրանցքի սկիզբը, 5. Տաշիրի աջափնյա և Չորագետի միջին հոսանքները մինչև ք. Ստեփանավան, 6. Արմանիսի շրջակա տարածքը, 7. Քաղաք Ստեփանավանը, 8. Չորագետի վերին հոսանքները մինչև Կաթնառատ բնակավայրը, 9. Չորագետի վտակ Չքնաղը մինչև գյուղ Արմանիսը, 10. Լոռու ջրանցքի և Գարգառ գետի ավազանի միջև ընկած տարածքը, 11. Գարգառ գետը մինչև Հոբարձ բնակավայրը, 12. Գյուլաքարակի Սոճու պուրակ արգելավայրը, 13. Գարգառ գետը Հոբարձ բնակավայրից մինչև գետաբերանը, 14. Տաշիր գետի ստորին հոսանքի ձախափնյա վտակները, 15. Տաշիր գետի Ուռուտ վտակը մինչև Լոռու ջրանցքը, 16. Դեբեդի և Չորագետի ձախափնյա վտակները մինչև Աքոռի գետը ներառյալ, 18. Փամբակ գետի վերին հոսանքները (Նալբանդի ջրանցքից

վերև ընկած հատվածը), 21. Չիչխան գետը, 22. Փամբակ գետի Որդնավ վտակը, 24. Փամբակ գետի ձախակողմյան վտակները (Գոգարանից մինչև Բագունջուր գետը ներառյալ), 25. Փամբակ գետի Լեռնաջուր վտակը (աջակողմյան), 26. Փամբակ գետի Տանձուտ և Վանաձոր վտակները մինչև ք. Վանաձորը, 28. Փամբակ գետի ձախակողմյան վտակները (ք.Վանաձորից մինչև Ձորագետ գետի միախառնում), 30. Փամբակ գետի աջակողմյան վտակները (ք. Վանաձորից մինչև Ձորագետ գետի միախառնում), 31. Դեբեդի աջակողմյան Մարց վտակը, 33. Դեբեդ գետը Թունանյան քաղաքից մինչև ք. Ալավերդի, 34. Դեբեդ գետի աջակողմյան վտակները (Քիստում գետից մինչև Շնող գետ), 35. Շնող գետը, 38. Ախթալա գետը վերին հոսանքներում, 43. Դեբեդ գետի աջակողմյան վտակները (Շնող գետի գետաբերանից մինչև պետական սահման՝ Նոյեմբերյանի ջրանցքից վերև), 46. Նոյեմբերյանի (Պողապանի) ոռոգման ջրանցքի և Դեբեդ գետի միջև ընկած տարածքը, 47. Դեբեդ գետի ձախակողմյան տարածքը (Ճոճկան գյուղից մինչև Վրաստանի սահման, 48. Դեբեդ գետի ձախափնյա վտակները, որոնք հոսում են ՀՀ սահմաններից դուրս:

***Որպես արհեստական ջրային մարմիններ առանձնացվել են.***

17. Լոռու ջրանցքը, որը սկիզբ է առնում Տաշիր գետից՝ Սարատովկա բնակավայրից հարավ և ձգվում է 26 կմ՝ մինչև Օձուն բնակավայրը: Ջրանցքի միջին ելքը կազմում է մոտ  $2.5 \text{ մ}^3/\text{վ}$ , իսկ տարեկան հոսքը՝ 20 մլն  $\text{մ}^3/\text{տարի}$ : Ջրանցքի միջոցով ոռոգվում է մոտ 4532 հա ոռոգելի հողատարածքներ: Լոռվա ջրանցքի երկարությունը 46.9 կմ է:

19. Նալբանդի ջրանցքը սկիզբ է առնում Չիչխան գետի ստորին հոսանքից, շրջանցում է Շիրակամուտի գոգավորությունը, վերցնելով լրացուցիչ ջուր Փամբակ գետի վերին հոսանքից, հասնում է մինչև Շիրակամուտ բնակավայրը: Ջրանցքի ելքը կազմում է մոտ  $2.0 \text{ մ}^3/\text{վ}$ , իսկ տարեկան հոսքը՝ 12.6 մլն  $\text{մ}^3/\text{տարի}$ : Ջրանցքի միջոցով ոռոգելի հողատարածքները կազմում են մոտ 1900 հա: Ջրանցքի երկարությունը կազմում է 47.1 կմ:

42. Այրում ՀԷԿ-ի ջրանցքը սկիզբ է առնում Շնող գետի գետաբերանից ներքև և հասնում մինչև Քարկոփ բնակավայրը: Այրում ՀԷԿ-ի ջրանցքի երկարությունը կազմում է 2.6 կմ, իսկ նրա միջին թողունակությունը մոտ  $19 \text{ մ}^3/\text{վ}$  է:

45. Նոյեմբերյանի (Պողապանի) ոռոգման ջրանցքը ընդգրկում է Պողապանի ոռոգման ջրանցքը, որը սկսվում է Այրում ՀԷԿ-ի մոտից՝ պոմպակայանների համակարգով, և շարունակվում է մինչև Դեբեդավան (Լալվար) բնակավայրը՝ մոտ 13.6 կմ երկարությամբ: Ջրանցքից խոշոր ջրառ է առնում Նոյեմբերյանի քառաստիճան ջրհան կայանը, ավելի քան  $1.0 \text{ մ}^3/\text{վ}$  ելքով, որը ոռո-

գում է Տավուշի մարզի Չաղթանակ, Պտղավան, Դեղծավան և այլ բնակավայրերի մոտ 8300 հա հողատարածքներ:

Որպես ռիսկային ջրային մարմիններ առանձնացվել են հետևյալ տարածքները.

20. Փամբակ գետը Նալբանդի ջրանցքի միջև տարանջատվել է որպես ռիսկային՝ հաշվի առնելով էական մարդածին ճնշումները հետևյալ աղբյուրներից. գյուղատնտեսական մշակաբույսերի մշակում և պարարտանյութերի օգտագործում, ինչպես նաև անասնապահություն և գերարածեցում: Վերոնշյալ դատողությունները հիմնավորվում են նաև մոնիտորինգային տվյալներով: Այս տարածքի ջրի որակական դասը, ըստ մոնիտորինգային տվյալների, գնահատվել է որպես «միջին»:

Տարածքը հիմնականում պարփակված է Նալբանդի ջրանցքով և ռելիեֆը հարթ է, այստեղ տարածվում է Շիրակամուտի գոգավորությունը: Այս մարմնի միայն հյուսիսային հատվածն է, որի ռելիեֆը լեռնային է: Այստեղ է գտնվում Շիրակամուտի ստորերկրյա ճնշումային (արտեզյան) համեմատաբար փոքր ջրավազանը: Տարածքում հիմնականում գերակշռում են ջրաներժ ապարները, իսկ երկրաբանական տեսանկյունից գերակշռում են սիլիկատային ապարները:

23. Փամբակ գետը Սպիտակից մինչև Վանաձոր մարմինը առանձնացված է, որպես ռիսկային: Ընդգրկում է Սպիտակ քաղաքի տարածքը: Մարմինն առանձնացվել է սննդի արդյունաբերության, գյուղատնտեսական մթերքների արտադրության և կեղտաջրի կոյուղու կոլեկտորի առակայության հիման վրա: Այս ջրային մարմինը համարվում է ռիսկային, հաշվի առնելով այս տարածքի ջրի որակի գնահատման դասը, որն ըստ մոնիտորինգային տվյալների, գնահատվել է որպես «միջին»:

27. Փամբակ և Տանձուտ գետերը Վանաձոր քաղաքի տարածքում առանձնացվել են որպես ռիսկային, ըստ ջրի որակի գնահատման դասերի, նրանք «միջին» դասի են: Քաղաքի տարածքում տեղաբաշխված են քիմիական (ազոտական պարարտանյութեր), սննդի (մսամթերքներ), թեթև (կաշվի և մորթու) և այլ արդյունաբերական գործարաններ, կեղտաջրի կոյուղու մաքրման կայանը: Վանաձոր քաղաքի տարածքում կա ոչ մեծ ստորերկրյա ճնշումային (արտեզյան) ջրավազան:

29. Փամբակ գետը Վանաձոր քաղաքից մինչև Ձորագետ գետի միախառնումը համարվում է ռիսկային՝ հաշվի առնելով էական մարդածին ճնշման հետևյալ աղբյուրները. քաղաքային ջրահեռացում, մերառյալ կեղտաջրերի հորերը, սննդի արդյունաբերության ջրահեռացում, արդյունաբերական և հան-

քավայրերի ջրահեռացում, անասնապահություն և գերարածնցում, ավտոտրանսպորտ և պինդ թափոններ: Վերոնշյալ դատողությունները հիմնավորվում են նաև մոնիտորինգային տվյալներով, ըստ որոնց տվյալ տարածքի ջրի որակի դասը գնահատվել է որպես «վատ»:

32. Դեբեդ գետը Փամբակ և Ջորագետ գետերի միախառնումից մինչև Թումանյան քաղաքը, որն ընդգրկում է Դեբեդ գետն իր ափաբերծ տարածքով: Համարվում է ռիսկային՝ հաշվի առնելով էական մարդածին ճնշումները որի աղբյուրը ավտոտրանսպորտն է: Վերոնշյալ դատողությունը հիմնավորվում է նաև մոնիտորինգային տվյալներով, ըստ որոնց տվյալ ջրային մարմինը պատկանում է ,միջին գասին:

36. Ալավերդի գետն առանձնացվել է որպես ռիսկային Ալավերդի գետի վերին և միջին հոսանքներում շահագործվող հանքավայրերի, Ալավերդի քաղաքի պղնձածուլական գործարանի և գործարանի պոչամբարի, ինչպես նաև կեղտաջրի կոյուղու կոլեկտորի հիման վրա:

37. Դեբեդ գետը Ալավերդի քաղաքից մինչև Ախթալա գետը համարվում է ռիսկային՝ հաշվի առնելով էական մարդածին ճնշումները հետևյալ աղբյուրներից. արդյունաբերական և հանքավայրերի ջրահեռացում, քաղաքային ջրահեռացում՝ ներառյալ կեղտաջրերի հորերը:

39. Ախթալա գետի միջին և ստորին հոսանքների տարածքում է գտնվում Շամլուղի և Ախթալայի պղնձի շահագործվող հանքավայրերը, Ախթալայի հանքահարստացուցիչ ֆաբրիկան, ճաճկանի հին և նոր պոչամբարները: Տարածքի ռելիեֆը խիստ կտրտված է ձորակներով, իսկ լանջերն էլ զառիթափ են: Գետն այստեղ սելավաբեր է և հաճախակի վնասներ է պատճառում: Սելավների ակտիվացման պատճառից մեկը մարդու տնտեսական գործնությունն է ավազանում, մասնավորապես հանքարդյունաբերության թափոնները և տարածքի անտառների զանգվածային հատումները: Այս մարմնի տարածքում է գտնվում նաև Ախթալա քաղաքը:

40. Ճոճկանի պոչամբարը համարվում է ռիսկային, քանի որ պոչամբարի մակերևույթից անձրևներից առաջացած հոսքաջրերի լվացման հետևանքով աղտոտված ջրերը տեղափոխվում են Դեբեդ գետ:

41. Դեբեդ գետը Ախթալա գետի գետաբերանից մինչև ք. Այրում համարվում է ռիսկային՝ հաշվի առնելով էական մարդածին ճնշումները հետևյալ աղբյուրներից. արդյունաբերական և հանքավայրերի ջրահեռացում, ինչպես նաև ավտոտրանսպորտ: Վերոնշյալ դատողությունները հիմնավորվում են նաև մոնիտորինգային տվյալներով, ըստ որոնց, այս տարածքի համար ջրի որակի դասը գնահատվել է որպես «միջին»:



*Բանալի բառեր – ջրային ռեսուրսներ, տարանջատում, ջրային բարմիններ, ջրային շրջանակային դիրեկտիվ, գետավազան, հիդրոմորֆոլոգական ընտրություն*

#### **Գրականություն**

1. Հայաստանի Հանրապետության «Ջրային օրենսգիրք», 2002
2. Հայաստանի Հանրապետության օրենք «Ջրի ազգային ծրագրի մասին», 2006
3. ԵՄ, «Ջրային շրջանակային դիրեկտիվ», (2000/60/EC): Թարգմանություն անգլերենից, Երևան, 2009:

### **РАЗДЕЛЕНИЕ ВОДОСБОРНОГО БАСЕЙНА РЕКИ ДЕБЕД ПО РИСКОВЫМ ВОДНЫМ ТЕЛАМ**

**Б. П. МНАЦАКАНЯН**

*Доктор географических наук,  
профессор,  
заведующий кафедрой  
географии ГГУ*

**Б. Г. ЗАКАРЯН**

*Кандидат географических наук*

**Э. Э. МИСАКЯН**

*Соискатель института водных проблем и  
гидротехники Армгосгидромет*

**Л. О. АГАДЖАНЫН**

*Соискатель института водных проблем и гидротехники*

В статье на примере бассейна реки Дебед рассматриваются подходы к разделению водных ресурсов, осуществляемые в соответствии с Рамочными Водными Директивами Евросоюза, а также с требованиями Водного Законодательства РА.

Применение этих требований осуществлялось разделением водных ресурсов по географическим или гидроморфологическим показателям. Одновременно в качестве первого шага разделения водных тел проведен отбор показателей, исходя из того, что их присутствие приводит к количественным и качественным изменениям.

Предлагаемую методику можно использовать также и для других крупных речных бассейнов республик с целью решения задач планирования водных ресурсов и управления ими.

## SEPARATION OF CATCHMENT DEBED ON RISK WATER BODIES

**B. P. MNATSAKANYAN**

*Dotcor Professor of Geographical Sciences,  
Head of the Geography Chair*

**B. G. ZAKARYAN**

*PhD of Geographical Sciences*

**E. E. MISAKYAN**

*Hydrometeorology, Researcher*

**L. O. AGHAJANYAN**

*Researcher of the Institute of Water Problems  
and Hydraulic Engineering*

In this paper, basin as an example river Debed, regarded approaches Division of water resources, which are in accordance with the EU Water Framework Directive and the requirements of the Water legislation RA.

The application of these competencies in the division of water resources on geographical or hydro-morphological, risky and very modified and artificial water bodies

At the same time, as a first step, the separation of water bodies carried out the selection of indicators, based on the fact that their presence leads to quantitative changes.

Suggest the technique can also be used for other major river basins of the republics to meet the challenges of planning and management of water resources.